



Եվրոպայում անվտանգության և  
համագործակցության կազմակերպություն  
Երևանյան գրասենյակ



## ԵԱՀԿ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ

### ՁԵԿՈՒՅՑ

«ՀՀ ՔԿԱԳ տարածքային բաժինների հասարակական մոնիթորինգ» ծրագրի  
շրջանակներում իրականացված մոնիթորինգի արդյունքները

ԵՐԵՎԱՆ – 2012թ.

**Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**Ներածություն** .....

*ՔԿԱԳ տարածքային բաժինների կողմից մատուցված ծառայությունների բնույթն ու որակը* .....

*ՀՀ քաղաքացիների բավարարվածությունը ՔԿԱԳ տարածքային բաժինների աշխատանքից* .....

*Քաղաքացիների իրազեկության հիմնախնդիրներ* .....

*Խախտումներ և կոռուպցիոն դրսևորումներ* .....

*Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ոլորտը կարգավորող օրենսդրությունը*.....

**Եզրակացություն և առաջարկություններ** .....

## Ներածություն

2012 թվականի հուլիսի 17-ից մինչև հոկտեմբերի 12-ը ընկած ժամանակահատվածում Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի (այսուհետ՝ ՀԵԻԱ) մոնիթորինգային ցանցի անդամները ՀՀ Քաղաքացիական կացության ակտերի գրանցման (այսուհետ՝ ՔԿԱԳ) տարածքային բաժինների գրասենյակներում երկու փուլով իրականացրել են դիտորդական առաքելություն: Ձուգահեռաբար ՔԿԱԳ տարածքային բաժինների ծառայություններից օգտվող քաղաքացիների հետ ստանդարտացված հարցազրույցի միջոցով անցկացվել է սոցիոլոգիական հետազոտություն: Նույն ժամանակահատվածում իրականացվել է քաղաքացիական կացության ակտերի գրանցման ծառայությունների ոլորտը կարգավորող համապատասխան օրենսդրական ակտերի իրավագիտական վերլուծություն: Այս բոլոր աշխատանքները կատարվել են «ՀՀ ՔԿԱԳ տարածքային բաժինների հասարակական մոնիթորինգ» ծրագրի շրջանակներում:

Ծրագրի նպատակն էր՝ ՀՀ ՔԿԱԳ տարածքային բաժինների կողմից ՀՀ քաղաքացիներին տրամադրվող ծառայությունների որակի բարելավումը և կոռուպցիոն դրսևորումների կանխարգելումը, ինչպես նաև այդ գործում հասարակական կազմակերպությունների դերի մեծացումը: Ծրագիրը իրականացվել է ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ֆինանսական աջակցությամբ և ՀՀ տարածքային կառավարման նախարարության հետ համագործակցությամբ:

Ծրագրի շրջանակներում իրականացված մոնիթորինգի արդյունքների ամփոփման հիման վրա, ՀԵԻԱ-ի կողմից կազմվել է զեկույց, որը քննարկվել է ՀՀ տարածքային կառավարման նախարարությունում՝ 2012 թվականի դեկտեմբերի 3-ին հրավիրված աշխատանքային հանդիպման շրջանակներում: Աշխատանքային հանդիպմանը մասնակցում էին ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանը, ՀՀ տարածքային կառավարման նախարարության համայնքային ծառայության հարցերի վարչության պետ Արթուր Սողոմոնյանը, ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության պետ Հմայակ Նավասարդյանը, Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի նախագահ Կարեն Զադոյանը, ծրագրի սոցիոլոգ Արթուր Մկրտչյանը և ծրագրի մոնիթորինգային աշխատանքները համակարգող/իրավաբան Գոհար Կոստանյանը: Արդյունքում, ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից «ՀՀ ՔԿԱԳ տարածքային բաժինների հասարակական մոնիթորինգ» ծրագրի շրջանակներում իրականացված մոնիթորինգի արդյունքների զեկույցն արժանացել է հավանության<sup>1</sup>:

Նկատի ունենալով, որ մոնիթորինգների պարբերաբար իրականացումը հանդիսանում է պետական կառավարման համակարգի նկատմամբ հասարակական վերահսկողության արդյունավետ և գործուն մեխանիզմ, որը կարող է մեծ դեր ունենալ ՀՀ ՔԿԱԳ ոլորտի գործառնության բարելավման գործում, ինչի մասին վկայում է նաև

---

<sup>1</sup> Ծրագրի իրականացումը հնարավոր եղավ ՀՀ տարածքային կառավարման նախարարության հետ սերտ համագործակցության արդյունքում, ինչի համար հատուկ շնորհակալություն ենք հայտնում ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար՝ Արմեն Գևորգյանին և նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանին:

ՀԵԻԱ-ի կողմից նախկինում իրականացված հասարակական մոնիթորինգները, ուստի և, սույն մոնիթորինգի ժամանակ պահպանվել են այն մեթոդաբանությունը, որոնց օգնությամբ ՀՀ ՔԿԱԳ տարածքային բաժիններում հասարակական մոնիթորինգ է իրականացվել 2011 թ.-ին: Վերջինս նաև հնարավորություն է ընձեռել բացահայտել երկու մոնիթորինգների միջև ընկած ժամանակահատվածում ՔԿԱԳ տարածքային բաժինների աշխատանքներում եղած բարելավումների դինամիկան<sup>2</sup>:

Մոնիթորինգի շրջանակներում 2011 թ. իրականացված հարցմանն ընդհանուր առմամբ մասնակցել էին 1203 քաղաքացի, որոնցից 51%-ը կանայք էին, 49%-ը՝ տղամարդ: Ընտրանքի չափանիշներն էին ՔԿԱԳ տվյալ տարածքային բաժնում կատարվող գործարքների քանակը, համապատասխան ծառայությունների մատուցման բնույթը, տեղակայման վայրը (մայրաքաղաք, մարզկենտրոն, շրջանային նշանակության քաղաք): Համամասնորեն ընտրվել էին երկուական ՔԿԱԳ տարածքային բաժիններ Երևանից և Ամուսնությունների պալատը (, Կենտրոն և Նորք-Մարաշ, Նոր-Նորք), մարզկենտրոններից (Եղեգնաձոր, Կապան, Վանաձոր), ինչպես նաև Աբովյանի, Արարատի, Թալինի ՔԿԱԳ տարածքային բաժինները: Ընտրանքի մեջ յուրահատկություններից ելնելով լրացուցիչ ընդգրկված էին Երևանի Հատուկ սպասարկման (Թաղման բյուրո), Արմավիրի և Գավառի ՔԿԱԳ տարածքային բաժինները:

2012 թ. դիտորդության ընթացքում, պահպանելով ընտրանքի չափանիշները և հաշվի առնելով 2011թ. մոնիթորինգի արդյունքները, դիտորդական առաքելություն է իրականացվել Երևանի Կենտրոն և Նորք-Մարաշ, Նոր-Նորք, Եղեգնաձորի, Կապանի, Վանաձորի, Աբովյանի, Արարատի, Թալինի ՔԿԱԳ տարածքային բաժիններում, ինչպես նաև Երևանի Արաբկիր և Մալաթիա-Սեբաստիա ՔԿԱԳ տարածքային բաժիններում և Երևանի հատուկ սպասարկման տարածքային բաժնում /թաղման բյուրո/: Ամուսնությունների պալատը ընտրանքի մեջ չի ընդգրկվել հիմնական և մշտական գրասենյակի բացակայության պատճառով:

Ընդհանուր թվով 2012թ. մոնիթորինգն ընդգրկել է տասնմեկ ՔԿԱԳ տարածքային բաժին, յուրաքանչյուրում դիտորդներն աշխատել են երկուսից չորս աշխատանքային շաբաթ, պատահականորեն ընտրված օրերին՝ խնդիր ունենալով օրվա հաճախորդների հետ ստանդարտացված հարցազրույցի միջոցով հարցում իրականացնել և անձնական դիտարկումներ կատարել: Հարցվողների ընտրանքը կազմվել է շրջանային բազմաստիճան ընտրանքի սկզբունքով:

Մոնիթորինգի շրջանակներում իրականացված հարցմանը ընդհանուր առմամբ մասնակցել էին 1418 քաղաքացի, որոնցից 54%-ը կանայք էին, 46%-ը՝ տղամարդ: Հարցվածների 41%-ը ունեին բարձրագույն կրթություն, 23%-ը՝ միջին մասնագիտական, 34%-ը՝ միջնակարգ, 1.5%-ը՝ թերի միջնակարգ, 0.5%-ը՝ թերի բարձրագույն: Ռեապոնդենտների մեջ ամենամեծ մասը տնային տնտեսուհիներն էին կազմում (17%), այնուհետև՝ սպասարկման ոլորտի աշխատողները (16%), կրթության ոլորտի աշխատողները (8%), բանվորները (7%), կենսաթոշակառուները (5%), գյուղատնտեսության մեջ զբաղված անձիք (3%), անհատ ձեռներեցիները (9%),

<sup>2</sup> Հանրային ծառայությունների այս ոլորտի նկատմամբ 2011 և 2012 թվականների միջև ընկած ժամանակահատվածում ՀԵԻԱ-ի կողմից կատարված մոնիթորինգի միջոցով իրականացվող վերահսկողությունն արդեն իսկ պետք է ստիպեր, որ ծառայություններ մատուցողներն ավելի բարեխիղճ վերաբերվեն իրենց պարտականություններին և բարելավեն իրենց աշխատանքը:


շինարարները (6%), առողջապահության ոլորտի աշխատողները (6%),  
զինվորականները (4%), ուսանողները (6%), գործարարները (3%), պետական  
պաշտոնյաները (2%): Հարցմանը մասնակցածների 8%-ը այլ զբաղմունքի մարդիկ էին:

## ՔԿԱԳ տարածքային բաժինների կողմից մատուցված ծառայությունների բնույթն ու որակը

Դիտորդական առաքելության նպատակներից է ՔԿԱԳ ծառայությունների մատուցման ոլորտում առկա հիմնախնդիրների բացահայտումը և դրանց լուծմանն ուղղված համապատասխան առաջարկությունների ներկայացումը, ոլորտում մատուցվող ծառայությունների որակի բարձրացումը: Ուստի կարևոր է իմանալ, թե ՔԿԱԳ տարածքային բաժինները ինչպե՞ս են իրականացնում իրենց գործառնությունները, ինչ բնույթի են նրանց կողմից մատուցված հիմնական ծառայությունները:

2012 թվականի հուլիսի 17-ից մինչև հոկտեմբերի 12-ը ընկած ժամանակահատվածում երկու փուլով կատարված ստանդարտացված հարցազրույցի արդյունքները փաստում են, որ մարդիկ գալիս են ՔԿԱԳ տարածքային բաժիններ առավելապես ամուսնություն կամ ծնունդ գրանցելու, հայրություն որոշելու, ամուսնալուծվելու, համապատասխան տեղեկանք կամ փաստաթղթի կրկնօրինակ վերցնելու, հարազատի մահվան հետ կապված փաստաթղթեր ձևակերպելու համար (տե՛ս Գծապատկեր 1):

*Գծապատկեր 1. ՔԿԱԳ տարածքային բաժիններում իրականացված պետական գրանցման ակտերի տարբեր տեսակների հարաբերական կշիռը*




Ինչպես երևում է գծապատկերից, հարցվածների 23%-ը նշել է, որ ՔԿԱԳ տարածքային բաժին դիմել է ամուսնություն, 21%-ը՝ ծնունդ, 9.2%-ը՝ մահվան փաստ գրանցելու, 8.3%-ը՝ հայրություն որոշելու, 4%-ը՝ ամուսնալուծություն գրանցելու, 3.1%-ը՝ անուն փոխելու, 0.4%-ը՝ որդեգրման, 31%-ը՝ այլ գործարքներ իրականացնելու համար (այդ թվում՝ տեղեկանք կամ համապատասխան փաստաթղթի կրկնօրինակ վերցնելու): ՔԿԱԳ տարածքային բաժիններ դիմած քաղաքացիների 40%-ը առաջին անգամ էր օգտվում այդ բաժինների ծառայություններից, 50%-ը՝ հազվադեպ, իսկ 10%-ը հաճախ է դիմում ՔԿԱԳ տարածքային բաժիններ (տե՛ս Գծապատկեր 2):

2011թ. մոնիթորինգի ժամանակ ծնունդ գրանցելու համար ՔԿԱԳ տարածքային բաժիններ այցելած մարդկանց 2%-ը նշել էր, որ ՔԿԱԳ բաժնի աշխատակիցները փորձելին իրենց պարտադրել, որ երեխաների անունները իրենք ընտրեն անունների հատուկ

ցանկից: Այս հարցում արձանագրվել էր առաջընթաց, արդեն հարցվածների միայն 0.28%-ն է նշել, որ իրենց խոչընդոտում էին իրենց արդեն իսկ որոշած անունը տալ նորածին երեխային:


*Գծապատկեր 2. ՔԿԱԳ տարածքային բաժինների ծառայություններից օգտվելու հաճախականությունը*



Հարցվածների 4%-ը նշել էին, որ ՔԿԱԳ տարածքային բաժիններում մերժել էին կատարել պետական գրանցման գործողությունը: 2011թ. մոնիթորինգի ժամանակ այդպիսիք՝ 3% էին: Որպես մերժման հիմնավորում, նրանց մեծ մասին (67%) պատճառաբանվում էր համապատասխան փաստաթղթերի պակասը: Այդ ռեսպոնդենտների 12%-ը բողոքել էր, որ մերժման համար ոչ մի հիմք չկար (հիմնականում նրանց ասել էին, որ զան հաջորդ օրը), ևս 15%-ի մերժումը պայմանավորված էր այլ բաժիններ ուղարկելով, իսկ 6%-ին էլ մերժել էին՝ պատճառաբանելով փաստաթղթերում եղած սխալները: Անցած տարվա հարցման ժամանակ ռեսպոնդենտների 8%-ն էր կարծում, որ մերժումը անհիմն է: Այստեղ նկատվում է դժգոհության աճ, որը մտահոգիչ է:

Ինչ վերաբերում է ամուսնության պետական գրանցման ժամկետը կրճատելու հարցին, ապա մեր ռեսպոնդենտների մի մասը կողմ էր, որ այդ ժամկետը կրճատվի. մինչև 10 օր (18%), մինչև մեկ շաբաթ (23%), մինչև մեկ օր (30%), իսկ մնացած ռեսպոնդենտները (29%) համաձայն չէին, որ կրճատվի (տե՛ս Գծապատկեր 3):

Գծայատկեր 3. Քաղաքացիների վերաբերմունքը ամուսնության պետական գրանցման ժամկետի կրճատմանը



2011թ. մոնիթորինգի ժամանակ հարցմանը մասնակցած քաղաքացիների պատասխանները այլ էին. 24%-ը կողմ էին, որ այդ ժամկետը կրճատվի մինչև 10 օր, 23%-ը՝ մինչև մեկ շաբաթ, 11%-ը՝ մինչև մեկ օր, իսկ մնացած ռեսպոնդենտները (42%) համաձայն չէին, որ կրճատվի: Ինչպես տեսնում ենք, կրճատման կողմնակիցների թիվը կտրուկ աճել է, ինչը պայմանավորված է արդեն տեղի ունեցած կրճատման պրակտիկայի դրական արդյունքներով:


Մոնիթորինգի ընթացքում պարզվեց, որ որոշ ՔԿԱԳ տարածքային բաժիններում դրանց ղեկավարները և աշխատակիցները չէին պահպանում աշխատանքային կարգապահության կանոնները: ՔԿԱԳ տարածքային բաժինների ղեկավարները սովորություն էին դարձրել մի քանի րոպեից ընդհուպ մինչև մեկ ժամ աշխատանքից ուշանալը, աշխատաժամերին բաժնի տարածքից բացակայելը: Իսկ Երևանի ՔԿԱԳ տարածքային բաժիններից մեկում, սեպտեմբերի 26-ին կատարած մոնիթորինգի ժամանակ արձանագրվել է հետևյալը. «Երիտասարդ քաղաքացիները եկել էին ստանալու իրենց ամուսնության վկայականը, նրանց որոշակի ժամ էին ասել, սակայն գրեթե 30-40 րոպե սպասեցին այն ստանալու համար: Նշեմ սակայն, որ այդ ընթացքում հերթ չկար, բայց, դե, բաժնի պետը «Դժվար ապրուստ» էր դիտում: Ի դեպ այնքան բարձր էր հեռուստացույցի ձայնը, որ մենք ևս ունկնդիր էինք լինում այդ տհաճ ֆիլմի գոռոցներին» (հատված դիտորդի հաշվետվությունից): Գրեթե բոլոր բաժիններում ավելի շատ ուշացողները՝ դրանք բաժնի ղեկավարներն էին, որոնք առավոտյան և ընդմիջումներից հետո հաճախ էին ուշանում կամ չէին վերադառնում: Օրինակ՝ սեպտեմբերի 26-ին նույն տարածքային բաժնում դիտորդն արձանագրել է. «Բաժնի պետը 15:14 լքեց տարածքը, առանց որևէ պատճառաբանության, և վերադարձավ 16:23-ին»: Պետք է նշել, որ նշված ՔԿԱԳ տարածքային բաժնի ղեկավարը նաև դիտորդության նախորդ օրերին էր ուշացումով ներկայանում աշխատանքի:



Ղեկավարների ուշացումների առումով նմանատիպ վիճակ էր նաև մարզերի և Երևանի այլ ՔԿԱԳ տարածքային բաժիններում: Երևանի ՔԿԱԳ տարածքային բաժիններից մեկում սեպտեմբերի 18-ին դիտորդն արձանագրել է, որ բաժինը *«Բացվել է սահմանված ժամից ուշ: Աշխատակիցները եկան ուշացած: Երկու աշխատակից դուրս եկան և մոտ երկու ժամ չվերադարձան, որը պատճառ հանդիսացավ հերթի: Միննույն ժամանակ դուրս էր եկել նաև վարիչը, որն օրվա ընթացքում մի քանի անգամ դուրս եկավ մոտ մեկ ժամ տևողությամբ: Աշխատողներից մեկը շուտ գնաց տուն, նրան հետևեց նաև վարիչը»:*

Մեծ խնդիր էր հերթերի կուտակումը ՔԿԱԳ տարածքային բաժիններում, որոնց հիմնական պատճառներ հարցման մասնակիցները նշում էին. այցելուների մեծ քանակը - 39%, ՔԿԱԳ բաժինների աշխատակիցների դանդաղ աշխատանքը - 10%, աշխատակիցների անկարգապահությունը, նրանց կողմից հերթի խախտումը - 1%, հերթագրման բացակայությունը - 19%, և այլն - 31 % (տե՛ս Գծապատկեր 4):

*Գծապատկեր 4. ՔԿԱԳ բաժիններում հերթերի պատճառներն ըստ ռեսպոնդենտների*



Չնայած, որ հարցմանը մասնակցած քաղաքացիների 47%-ը (նախորդ տարվա հարցման ժամանակ այդ ցուցանիշը 52% էր կազմում) ցանկություն էր հայտնել նախապես հերթագրվել, իսկ ռեսպոնդենտների 19%-ը (13%) հենց հերթագրման բացակայությունն էր համարում հերթերի հիմնական պատճառ, ՔԿԱԳ տարածքային բաժիններում նախապես հերթագրվելու կարգը չէր գործում: Իսկ այնտեղ, որտեղ գալիս էին հերթագրված անձիք, հաճախ չէին կարողանում միանգամից մտնել բաժնի ղեկավարի մոտ: ՔԿԱԳ տարածքային բաժինների աշխատակիցները հաճախ **«օգտագործում»** էին հերթագրման իրական կարգի բացակայությունն իրենց ծանոթներին արտահերթ սպասարկելու համար՝ ասելով, որ նրանք իբր նախապես հերթագրված են: *«Ինչպես յուրաքանչյուր մարմնում, այնպես էլ այստեղ գալիս էին միջնորդավորված անձինք, ովքեր հանդիսանում էին հավանաբար աշխատողների ծանոթները»* (հատված դիտորդի հաշվետվությունից):

Այս ամենի արդյունքում պետական գրանցման գործարքներ կատարելու համար եկած շատ քաղաքացիներ ստիպված էին լինում բավական երկար ժամանակ կորցնել ՔԿԱԳ տարածքային բաժիններում:

Պետք է նաև նշել, որ դժգոհ մնացած ռեսպոնդենտների մեծ մասը գանգատվել էր ՔԿԱԳ տարածքային բաժինների անհարմարավետությունից և անբավարար կահավորված լինելուց (օրինակ՝ ընդունարաններում նստարաններ կա՛մ չեն եղել, կա՛մ եղել են շատ հին ու կոտրված): Հարցվողները նշել էին ՔԿԱԳ տարածքային մարմիններում պատճենահանման սարքի անհրաժեշտության մասին, և ՔԿԱԳ տարածքային բաժիններում սահմանափակ հնարավորություններով մարդկանց համար հարմարությունների բացակայության մասին:

Դիտորդները նույնպես փաստել են, որ ՔԿԱԳ տարածքային մի շարք բաժիններում շենքային և գույքային պայմանները բարելավման կարիք ունեն: Մայրաքաղաքի Հատուկ սպասարկման բյուրոյից բացի, որտեղ բոլոր սենյակները վերանորոգված են, նաև Աբովյանի ՔԿԱԳ տարածքային բաժնից բացի, որտեղ *«տարածքը վերանորոգված էր, սակայն շատ անհարմար էր փոքրության պատճառով. քաղաքապետարանի շենքում երկու փոքր սենյակ էր հատկացված ՔԿԱԳ տարածքային բաժնի համար»* (դիտորդի հաշվետվությունից), մնացած բոլոր տեղերում շենքային պայմանները անբարեկարգ էին: Օրինակ՝ Նոր Նորքի ՔԿԱԳ տարածքային բաժինը *«վերջին անգամ սովետական ժամանակաշրջանում է վերանորոգվել: Չնայած, ընդհանուր առմամբ, տարածքը բավականին ընդարձակ է, ապահովված է անհրաժեշտ պայմաններով, առկա է լուսավորության խնդիր, կիսախավար վիճակում է գտնվում և միջին տարիքի քաղաքացիները դիմում լրացնելու խնդրի առաջ են կանգնում»* (դիտորդի հաշվետվությունից):

Նախորդ մոնիթորինգից մինչ այս մոնիթորինգն ընկած ժամանակահատվածում, այս առումով քիչ բան է փոխվել, առաջընթաց գրեթե չի նկատվում: Հատկապես ուշագրավ է Արարատի տարածքային բաժնի օրինակը, որտեղ նախորդ տարի իրականացված մոնիթորինգի ժամանակ սենյակները անբարեկարգ վիճակում էին (չէին ջեռուցվում, միջանցքում չկային նստարաններ, չկար սանհանգույց, աշխատողներին իրենց գործառույթները ժամանակին կատարելու համար չէին բավականացնում համակարգիչները): Այս տարի իրականացված մոնիթորինգը բաժնի նույն անմխիթար վիճակն է փաստում:


Ուստի կարելի է արձանագրել, որ ՔԿԱԳ տարածքային բաժինների շենքային պայմանները լրացուցիչ խոչընդոտներ են առաջացնում որակյալ ծառայություններ մատուցելու գործում:

Հարցվածների 6%-ը (3%) նշել է, որ իրենց հետ հաղորդակցվելիս ՔԿԱԳ տարածքային բաժինների աշխատակիցները չէին պահպանել էթիկայի կանոնները (կոպիտ էին, չէին առաջարկել նստել, սպասեցնել էին տալիս, անկողմնակալ չէին և այլն): Կոպտությունը երբեմն վեր է ածվում ծաղրի. *«Բա ասում ես մի հատ երեխա ունես, դու մի ասա երկու հատ ա»* (դիտորդի սեպտեմբերի 13-ի հաշվետվությունից): Ըստ դիտորդի, *«անքաղաքավարի վերաբերմունք էր ցուցաբերվում հատկապես մեծահասակ քաղաքացիների նկատմամբ»:*

## **ՀՀ քաղաքացիների բավարարվածությունը ՔԿԱԳ տարածքային բաժինների աշխատանքից**

Հարցվածների մեծ մասը, ընդհանուր առմամբ, բավարարված է ՔԿԱԳ տարածքային բաժիններում քաղաքացիների ընդունելության ընթացակարգից (տե՛ս Գծապատկեր 5):

*Գծապատկեր 5. Քաղաքացիների բավարարվածությունը ՔԿԱԳ տարածքային բաժինների ընդունելության ընթացակարգից*



Հարցմանը մասնակցած մարդկանց 49%-ը (48%) լիովին բավարարված է ընդունելության ընթացակարգից, իսկ 38%-ը (39%)՝ ավելի շուտ բավարարված է: Ռեսպոնդենտների 7%-ը (6%) ավելի շուտ բավարարված չէ, 3%-ն էլ (2%) բոլորովին բավարարված չէ ՔԿԱԳ տարածքային բաժինների ընդունելության ընթացակարգից: Իսկ հարցվածների 3%-ը (5%) դժվարացել է պատասխանել այդ հարցին: Ինչպես տեսնում ենք, այստեղ անցած տարվա հարցման համեմատ փոփոխությունները աննշան են:

Գրեթե չի փոխվել նաև իրենց տրամադրված ծառայություններից բավարարված մարդկանց թիվը: Եթե 2011թ. հարցմանը մասնակցած ռեսպոնդենտների 90%-ն էր իրեն բավարարված կարծում, ապա 2012 թ. մոնիթորինգի արդյունքում պարզվել է, որ մեր ռեսպոնդենտների 91%-ն է բավարարված: Դժգոհ քաղաքացիների 3%-ը բողոքում է իրենց բացատրությունների նկատմամբ բաժնի աշխատակիցների անուշադրությունից, 12%-ը դժգոհում է, որ բաժնի ղեկավարն ու աշխատակիցները միտումնավոր ձգձգում էին գործը, ստեղծելով բյուրոկրատական քաշքշուկ, 14%-ը՝ ՔԿԱԳ տարածքային բաժինների աշխատակիցների ոչ բավարար մասնագիտական գիտելիքներից, 5%-ը՝ անհարկի փաստաթղթեր պահանջելուց: Մակայն ուշագրավ է այն, որ ոչ ոք չի նշել, որ ՔԿԱԳ տարածքային բաժնի ղեկավարը իրենցից լրացուցիչ գումար էր ակնկալում, իսկ 2011 թ. այդպիսիք 8% էին: Մա, անշուշտ, դրական տեղաշարժ է:

Այստեղ, իհարկե, իրենց դերակատարությունն են ունեցել նաև դիտորդները: Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի կողմից իրականացվող մոնիթորինգը ինքնին նպաստում է դրական տեղաշարժերին, ստիպում ՔԿԱԳ տարածքային բաժինների աշխատակիցներին լինել զգոն և ուշադիր իրենց պարտականությունների կատարման նկատմամբ: Ինչպես դիտորդներից մեկն է հաղորդում. «Պետք մեզ ասաց, որ մեր ներկայությունից ինքը լարվում է, չի կարողանում աշխատել, ասաց որ ինքը կարող է գալ ուշացումով, գնալ տուն ժամանակից շուտ, որ

*մենք իրավունք չունենք գալ: Ինչքան էլ որ գաք, միննույն է, ոչ մի խախտում չեք նկատի»:* Ենթադրվում է, որ մոնիթորինգի բացակայության դեպքում իրավիճակը կարող է բոլորովին այլ լինել, քանի որ դիտորդները սեպտեմբերի 20-ին արձանագրել են նաև այնպիսի դեպք, երբ «*Բաժնի պետը նորից իր մոտ էր կանչել, ասում էր, որ անիմաստ աշխատանք էր անում, էս երկու ամիսը կարագապահ կաշխատեն, հետո նորից նույն վիճակը կլինի: Ասում էր՝ դու երիտասարդ ես, շատ բան չես հասկանում, մեր երկրում հաստատ են աշխատակիցները, որ խախտում են անում, նախարարությունում էլ ծանոթ ունեն, ու ոչ մեկ իրանց չի կարող բռնել»:* Ուշագրավ է նաև դիտորդի հետևյալ նշումը. «*Քաղաքացիներից մեկը այսօր ընդհամենը 10 րոպեում ստացավ իրեն անհրաժեշտ տեղեկանքը, մինչդեռ շատ քաղաքացիներ բողոքում էին, որ մի տեղեկանքի համար ամիսներով ստիպված են լինում սպասել»:*

Եղել են նաև դեպքեր, երբ քաղաքացիներն են իրենց դժգոհությունն արտահայտնել դիտորդների ներկայության համար՝ ասելով, որ եթե իրենք այստեղ չլինեին, ապա անհրաժեշտ տեղեկանքը ինքը վաղուց վերցրած կլիներ: Դա է վկայում, որ շատ հաճախ «գումար տալը» քաղաքացու նախաձեռնությամբ է լինում:

Հարցմանը մասնակցած մարդկանց 18%-ը դժգոհում էր, որ աշխատակիցները միանգամից մի քանի այցելու էին սպասարկում: Անցած տարվա հարցման ժամանակ այդ ցուցանիշը ընդհամենը 3% էր կազմում: Փաստորեն, այս հարցում լուրջ նահանջ է արձանագրվել: Այդ հանգամանքը բազմիցս փաստել էին նաև դիտորդները. «*Միաժամանակ սպասարկում էին մի քանի քաղաքացիների՝ չնայած որ հերթեր ընդհանրապես չկային»:*

ՔԿԱԳ տարածքային բաժիններից մեկում, սեպտեմբերի 29-ին իրականացված դիտորդության ընթացքում այսպիսի դեպք է արձանագրվել. «*Դիտորդության ընթացքում մի կին, ով, ինչպես երեկ էին ասել բաժնի պետի ճնշում չափողն էր, այսօր նս գտնվում էր պետի աշխատասենյակում և պարզվում է, որ մեր մյուս դիտորդներին աշխատողը ասել էր, որ տեխնիկական գործերով աշխատող է, մյուս աշխատողն ասել է, որ հավաքարար է, իսկ հենց ինքը՝ այդ կինը, ասել է, որ ինքը պետի քույրն է»:*

Քաղաքացիները ՔԿԱԳ տարածքային բաժինների աշխատանքից դժգոհ էին այլ պատճառներով ևս (աշխատակիցների ուշանալուց և այլն): Նրանց մի մասը կասկածում էր, որ ՔԿԱԳ տարածքային բաժինների ղեկավարներն ու աշխատակիցներն ունեն մասնագիտական բավարար գիտելիքներ: Թե՛ 2011 թ., թե՛ 2012թ. հարցումների մասնակիցների միայն 88%-ն է վստահ, որ կատարված պետական գրանցման գործողությունը համապատասխանում էր օրենքի պահանջներին և իրենք հետագայում փաստաթղթերի մասով խնդիր կամ վեճ չեն ունենա:

Չնայած քաղաքացիների որոշակի դժգոհությանը ՔԿԱԳ բաժինների աշխատանքից, ռեսպոնդենտների մեծ մասը (21% և 49% համապատասխանաբար) Հայաստանում քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման գործողությունների իրականացման համակարգի գործունեությունը գնահատում է շատ արդյունավետ կամ որոշ չափով արդյունավետ, 21%-ը դժվարացել է պատասխանել հարցին: 2012 թ. հարցվածների 9%-ն էր գտնում, որ ՔԿԱԳ ծառայությունների համակարգն անարդյունավետ է գործում: Իսկ 2011 թ. այդպես էր կարծում ռեսպոնդենտների 5%-ը: Սա մտահոգվելու տեղիք է տալիս, քանզի մեկ տարին բավական ժամանակ էր շտկելու եղած թերությունները, ինչը փաստորեն տեղի չի ունեցել, և քաղաքացիների վստահությունը համակարգի նկատմամբ ավելի է նվազել:


## Քաղաքացիների իրազեկության հիմնախնդիրներ

Մեր ռեսպոնդենտների 47%-ը (35%) մինչ գործարքը սկսելը ՔԿԱԳ տարածքային բաժնի ղեկավարի կողմից չէին ստացել պարզաբանումներ իրենց իրավունքների, պարտականությունների, ՔԿԱԳ մարմնի ղեկավարների և աշխատողների գործողությունների բողոքարկման կարգի և գրանցման գործողությունից բխող հետևանքների վերաբերյալ: Որոշ ՔԿԱԳ տարածքային բաժիններում քաղաքացիների համար փաստացիորեն դժվար էր օգտվել հիմնական տեղեկատվությունը պարունակող պաստառներից, քանզի դրանք փակցված էին անհարմար տեղում, գրված էին դժվար ընթերցանելի տառաչափով. «*Դիմումի ձևերը առկա են, բայց թերի են, իսկ տեղեկատվական պաստառները փակցված են ոչ մատչելի վայրում*» (հատված դիտորդի հաղորդումից): Քաղաքացիներից շատերը նույնիսկ չէին էլ մոտենում պատերին փակցված պաստառներին, որպեսզի ծանոթանան օրենքով սահմանված սակագներին: Իսկ մարզային ՔԿԱԳ տարածքային բաժիններից մեկում քաղաքացիները բողոքել էին, որ փակցված պաստառների շարքում լինի ոչ միայն դատարկ ձևաթուղթը, այլ նաև լրացված ձևաթուղթեր, որ հեշտությամբ կարողանան դիմում գրել, և ոչ թե հերթում սպասել:

Այստեղից հասկանալի է, թե ինչու՞ մեր ռեսպոնդենտների միայն 29%-ն է (26%) նախապես ծանոթացել ՔԿԱԳ տարածքային բաժիններում փակցված տեղեկություններին: Արդյունքում, մեր քաղաքացիները ՔԿԱԳ բաժիններում ստանում են այնպիսի որակի ծառայություն, որը համապատասխանում է իրենց իրավագիտակցության ցածր մակարդակին:

Պետական գրանցման գործողությունների դիմաց գանձվող պետական տուրքի չափերի մասին քաղաքացիների միայն 13%-ն է (16%) տեղեկացել պատերին փակցված սակագների ցուցակից (տե՛ս Գծապատկեր 6):

*Գծապատկեր 6. Պետական տուրքի չափերի մասին տեղեկացվածության աղբյուրները*




2011 թ.

հարցման ցուցանիշների համեմատ, 2012 թ. մի փոքր հետընթաց է նկատվել: Հարցմանը մասնակցածների 53%-ը (55%) նշել է, որ իրենց տեղեկացրել են ՔԿԱԳ բաժնի

աշխատակիցները, 8%-ը (7%) բարեկամներից և ընկերներից է իմացել, 1%-ը (0.4%)՝ հերթում կանգնածներից, 10%-ը (8.6%)՝ տեղեկացման այլ աղբյուրներից է օգտվել, իսկ 15%-ը (13%) պետական տուրքի չափերից ընդհանրապես տեղեկացված չէր: Ինչպես տեսնում ենք, պետական սակագների վերաբերյալ այցելուների տեղեկացվածության նման պայմաններում, ՔԿԱԳ տարածքային բաժինների աշխատակիցների կողմից հնարավոր չարաշահումների ռիսկեր են առաջանում:

Անբավարար տեղեկացվածությամբ կարելի է բացատրել այն հանգամանքը, որ այն հարցին, թե ըստ ռեսպոնդենտների կարծիքի՝ պետական գրանցման գործողությունների իրականացման համար վճարած պետական տուրքը համապատասխանում էր օրենսդրությամբ սահմանված դրույքաչափերին, քաղաքացիների 68%-ն է պատասխանել «այո» (այդ ցուցանիշը անցած տարվա հարցման 57%-ի համեմատ աճել է): Մնացած հարցվածների 26%-ը (38%) դժվարացել է պատասխանել, իսկ 6%-ը (5%) նշել է, որ վճարված գումարը չի համապատասխանում օրենքով սահմանված չափին (տե՛ս Գծապատկեր 7):

*Գծապատկեր 7. Վճարած պետական տուրքի համապատասխանությունը օրենքով սահմանված չափին ըստ ռեսպոնդենտների կարծիքի*



Այսպիսով ակնհայտ է, որ մեր քաղաքացիների տեղեկացվածության մակարդակը ՔԿԱԳ բաժինների աշխատանքը կանոնակարգող փաստաթղթերի վերաբերյալ, շատ հեռու է բավարար լինելուց:

## Խախտումներ և կոռուպցիոն ռիսկեր

Հայաստանի Հանրապետությունը վավերացնելով ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ կոնվենցիա»-ն, բազմաթիվ միջազգային այլ հանձնառություններով ստանձնել է պարտավորվածություն մշակել և իրականացնել կոռուպցիայի կանխարգելման և դրա դրսևորումների դեմ պայքարի արդյունավետ և կանխարգելիչ միջոցառումներ: ՀԵԻԱ-ի դիտորդական առաքելությունը նույնպես իրականացվել է այդ միջոցառումների համատեքստում, նպատակ ունենալով նպաստել ՔԿԱԳ ոլորտի պաշտոնյաների շրջանում հակակոռուպցիոն գիտակցության ընկալմանը և ձևավորմանը:

Մոնիթորինգը փաստում է, որ դեռ շատ անելիքներ կան այսուղղությամբ: ՀԵԻԱ-ի դիտորդները լուրջ խախտումներ էին արձանագրել ՔԿԱԳ տարածքային բաժիններում վճարված գումարների հետ կապված: Հարցման մասնակիցների 5%-ը (2%) խոստովանել է, որ ՔԿԱԳ տարածքային բաժինների գրասենյակներում գումար է վճարել: Ընդ որում, այդ մարդկանց 83%-ը նշել է, որ վճարված գումարի դիմաց իրենց անդորրագիր չի տրամադրվել: Դիտորդները նկատել են նաև, որ որոշ ՔԿԱԳ տարածքային բաժինների աշխատակիցներ 1000-ական դրամ են վերցնում այցելուներին օգնելու և նրանց դիմումները լրացնելու համար: «Քաղաքացիներից մեկը նախապես ծոցագրպանում առանձնացրեց 1000 դրամ և մտավ աշխատակիցների մոտ, և հետո նկատեցի, որ դիմումը լրացնելուց հետո գումարը փոխանցեց աշխատակցին»: Կամ՝ «Դիմումներ լրացնելը դժվարություն են առաջացնում մեծահասակների և ռուսական կրթություն ստացածների համար: ՔԿԱԳ աշխատակիցները հաճախ դրանք լրացնում էին և քաղաքացիներից վերցնում 1000 դրամ»:

Արձանագրվել են հաճախորդներից դրամ վերցնելու այլ դեպքեր, երբ դիտորդների ներկայությամբ տեղի են ունեցել բացահայտ դեպքեր. Երևան քաղաքի ՔԿԱԳ տարածքային բաժիններից մեկում դիտորդական առաքելություն իրականացրած երիտասարդ կինը նշել է. «Այսօր գրանցված ամուսնությունների ընթացքում հիմնականում նկատվում էին անուղղակի «կաշառքի» դեպքեր («ոմանք գալիս էին տոպրակներով, ոմանք խմիչքով, սուրճով և այլն»), իսկ արդեն ժամը 15:50-ին գրանցված ամուսնության ժամանակ քաղաքացին ակնհայտ աշխատակցին տվեց 5000 դրամ»:

Հարցվածների 3%-ը (1%) խոստովանել է, որ քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործողություններ կատարելիս օգտվել է միջնորդի ծառայությունից: Ընդ որում, այդ մարդկանց 10%-ը դա արել է ՔԿԱԳ տարածքային բաժինների աշխատակիցների ուղղորդմամբ: Համաձայն դիտորդի սեպտեմբերի 18-ի հաշվետվության՝ «Երկու քաղաքացի տեղեկանք ստանալու համար սպասում էին: Երբ վերջացրեցին, ես մոտեցա նրանց, և նրանք դրական պատասխանեցին իմ հարցերին: Երբ մենք գրուցում էինք, նրանցից մեկն ասաց, որ եթե մեր համար զանգած չլինեին մեր գործը արագ չէր լինի: Մի քաղաքացի էլ ներս մտավ և ասաց, որ իր համար զանգել են ներքին գործերից, ու աշխատակիցը արագ բոլոր գործերն արեց»: Այստեղ լրացուցիչ կոռուպցիոն ռիսկեր են առաջանում, քանզի միջնորդների մասնակցությունը ՔԿԱԳ ծառայությունների մատուցման գործընթացին օրենքով կանոնակարգված չէն:

Հարցվածների 1%-ին ՔԿԱԳ բաժնում առաջարկել են տեխնիկական բնույթի վճարովի ծառայություն. «Դիմումները լրացնելու համար ձևաթղթերը քաղաքացիներն են պատճենահանում ու բերում, հաճախ՝ մի քանի տասնյակ օրինակով» (մեջբերում դիտորդի գրառումներից): Ըստ մարզերից մեկում աշխատած դիտորդի թերթիկի՝

«Հաճախակի լսում ենք, թե քաղաքացիներն ինչպես են իրար հետ գրուցելիս որոշում գումար տալ ձևաթուղթը լրացնելու համար, սակայն երբ հարցնում ենք, թե արդյոք ՔԿԱԳ բաժնում որևէ գումար վճարե՞լ են, բացասական պատասխան են տալիս: Մի կին էլ հեզնանքով պատասխանեց, թե, եղածը մեծ բան չի, ես էլ շտապում եմ չեմ կարող երկար սպասել: Իսկ գումարի չափը հրաժարվեց ասել»:

Համաձայն Երևան քաղաքի վարչական շրջաններից մեկում տեղակայված ՔԿԱԳ տարածքային բաժնում մոնիթորինգ իրականացրած դիտորդի զեկույցի՝ «Մի քաղաքացի ասաց, որ ինքը գիտեր, որ ծննդի գրանցման համար պետք է վճարի 15.000 դրամ, սակայն մենք տեղեկացրեցինք, որ գրանցումն անվճար է և որևէ վճար չի գանձվում: Քաղաքացին զարմացավ և նշեց, որ նախկինում վճար կատարել է»: Կամ՝ «Հունաստանից ժամանած ընտանիքը երկու շաբաթ անընդմեջ գտնվում էր քաշքշուկի մեջ, բողոքում էր, որ ՔԿԱԳ տվել է 10.000 դրամ, վերջինս էլ ասել, թե «վերցրեք, ստուգում են, հանկարծ կտեսնեն», աղջիկն էլ ասել է, որ դուռը փակ է, չեն տեսնի, վերցրեք, և պետն էլ վերցրել է»:

Դիտորդները արձանագրել են նաև այսպիսի դեպքեր. «Քաղաքացիները, ովքեր եկել էին ամուսնությունը գրանցելու նպատակով, մտնում են պետի մոտ: Սկզբից խոսակցությունն ընթանում էր բավականին հանգիստ, քաղաքացիներին միայն մնում էր լրացնել դիմումը, սակայն, այդ ընթացքում քաղաքացին ասում է, որ ունի երկքաղաքացիություն, որից հետո բաժնի վարիչը կտրականապես հրաժարվում է ամուսնությունը գրանցելուց, և ասում, որ նրանք այդպիսի իրավունք չունեն, և դա կհակասի օրենքին, և ուղարկում են նրանց արդարադատության նախարարություն, երկար բանավեճից հետո դուրս է գալիս քաղաքացու կինը և նայելով մեզ ասում է. «սադ դուք էինք, ասեցին, որ դուք չլինեիք կանեինք, պետն ասեց, որ տանելու են դանոսը հասցնեն, ես էլ ասի չէ լավ երեխեք են, չեն ասի: Պետն էլ ասեց, կարող ա լավն են, բայց ամեն ինչ գրում են»: Այս ամենը լսելով առաջին կարգի մասնագետը բորբոքված դուրս եկավ իր աշխատասենյակից և ասաց. «Տիկին այս ինչ էք ասում, ուզում ա իրենք այստեղ չլինեին, մեկ ա մենք չէինք գրանցի այս ամուսնությունը, իրանք կապ չունեն»: Քաղաքացին էլ ասաց. «ամեն մեկդ ձեր պաշտոնի մասին էք մտածում»: Ժամը արդեն 18.00-ն էր, պետն էլ դուրս գալուց մտահոգված դեմքով մեզ ասաց. «հուսով եմ ճիշտը կարձանագրեք»: Կամ՝ «Երկու քաղաքացիներ, ովքեր եկել էին ամուսնության գրանցման համար ասացին, որ իրենք գիտեն, թե ամուսնության ժամկետը կրճատելու համար պետք է 14.000 դրամ վճարեն, բաժնի պետը խոսակցությանը այլ ընթացք տալու համար ասաց, որ մի գուցե նրանք հանդիսավոր արարողությունը նկատի ունեն՝ պետի աշխատասենյակում, երաժշտության ներքո»:

Մոնիթորինգի ժամանակ խախտումներ են նկատվել նաև փաստաթղթերի ստուգումների հետ կապված: Դիտորդները նշում են դեպքեր, երբ ՔԿԱԳ տարածքային բաժնի աշխատակիցները իրենց հայեցողությամբ են անհրաժեշտ փաստաթղթերը ստուգում: Եղել են դեպքեր, երբ քաղաքացիներին, ովքեր իրենց դիմումները տվել էին նախորդ օրերին, իսկ աշխատակիցները նրանց ասել էին, որ իրենց գործերը պատրաստ կլինեն այսինչ օրը, առաջարկվել է մեկ այլ օր ներկայանալ, քանի որ ղեկավարը տեղում չէ: Քաղաքացիները վրդոհվում էին, որովհետև կրկնակի տրանսպորտի ծախս էին անելու:



Այսպիսով, ակնհայտ է ՔԿԱԳ ոլորտի ինստիտուցիոնալ բարեփոխումների անհրաժեշտությունը: Միայն համապատասխան իրավական կարգավորման պարագաներում հնարավոր կլինի խուսափել կոռուպցիոն բնույթի խախտումներից:

## **Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ոլորտի օրենսդրական կարգավորումը**

*Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ոլորտը կարգավորվում է հետևյալ իրավական ակտերով՝*

1. «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենք (ընդունվել է 2004թ. դեկտեմբերի 8-ին, ուժի մեջ է մտել 2005թ. ապրիլի 5-ին),
2. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք (ընդունվել է 1998թ. մայիսի 5-ին),
3. ՀՀ ընտանեկան օրենսգիրք (ընդունվել է 2004թ. նոյեմբերի 09-ին),
4. «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենք (1997թ. դեկտեմբերի 27-ին),
5. ՀՀ կառավարության 14 ապրիլի 2005 թ. թիվ 492-Ն որոշում՝ Քաղաքացիական կացության ակտերի գրառումների ձևաթղթերի նշումները, այդ ձևաթղթերի լրացման կարգը, ինչպես նաև քաղաքացիական կացության ակտերի գրառման դիմումի ձևաթղթերի նմուշները հաստատելու մասին,
6. ՀՀ Արդարադատության նախարարի ժամանակավոր պաշտոնակատարի, ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալի 13 հուլիսի 2007թ. թիվ 204-Ն հրաման՝ Քաղաքացիական կացության ակտերի գրանցումների վկայականների տրամադրման կարգը հաստատելու մասին,
7. ՀՀ կառավարության 14 ապրիլի 2005 թվականի N 469-Ն որոշում՝ Քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումների վկայականների լրացման կարգը, դրանց նմուշները և քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման փաստը հաստատող այլ փաստաթղթերի ձևաթղթերի նմուշները հաստատելու մասին,
8. ՀՀ Արդարադատության նախարարի 02 հուլիսի 2005թ. թիվ 96-Ն հրաման՝ Քաղաքացիական կացության ակտերի գրանցման վերաբերյալ վկայականների կրկնօրինակների և տեղեկանքների տրման կարգը և Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մատյանների ձևերը հաստատելու մասին,`
9. ՀՀ Արդարադատության նախարարի 14 մայիսի 2005թ. թիվ 97-Ն հրամանը՝ Քաղաքացիական կացության ակտերի գրանցումների հետ կապված հրահանգչական ցուցումները հաստատելու մասին,
10. ՀՀ Արդարադատության նախարարի 17 օգոստոսի 1999թ. թիվ 1303 հրամանը՝ Անվան, հայրանվան և ազգանվան փոխման գրանցման վերաբերյալ հրահանգչական ցուցումները հաստատելու մասին,
11. Այլ ենթաօրենսդրական ակտեր:

Համաձայն «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքի՝ քաղաքացիական կացության ակտերը քաղաքացիների այնպիսի գործողություններն ու դեպքերն են, որոնք առաջացնում, փոփոխում կամ դադարեցնում են նրանց

իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև բնութագրում են քաղաքացիների իրավական վիճակը (հոդված 3):

Վերը նշված գործողությունները և դեպքերը, քաղաքացիների համար իրավունքներ և պարտականություններ առաջացնելու, փոփոխելու կամ դադարեցրնելու համար, պետք է օրենքով սահմանված կարգով գրանցվեն համապատասխան մարմիններում (ՔԿԱԳ մարմիններ):

➤ **Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների կառուցվածքը**

ՔԿԱԳ մարմինները կազմված են հետևյալ կառուցվածքային ստորաբաժանումներից՝

1. ՀՀ Արդարադատության նախարարության ՔԿԱԳ գործակալությունից՝ իր կառուցվածքային ստորաբաժանումներով և տարածքային բաժիններով,
2. ՔԿԱԳ տարածքային բաժիններից, որոնք ունեն համայնքային ենթակայություն և հանդիսանում են համայնքների առանձնացված ստորաբաժանումներ:

*ՔԿԱԳ գործակալության կառուցվածքային ստորաբաժանումներն են՝*

1. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման աշխատանքների և ապուստիլի բաժինը,
2. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման հանրապետական արխիվը:

*ՔԿԱԳ գործակալության տարածքային բաժիններն են՝*

1. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Ամուսնության պալատը,
2. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Երևանի հատուկ սպասարկման տարածքային բաժինը /թաղման բյուրո/:

➤ **ՔԿԱԳ տարածքային բաժինները**

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության տարածքային բաժինները՝ իրենց գործող հաստիքներով փոխանցվել է քաղաքային համայնքների ենթակայությանը:

Հայաստանի Հանրապետության համապատասխան համայնքի ղեկավարի աշխատակազմի (Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի) քաղաքացիական կացության ակտերի գրանցման տարածքային բաժինը աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում է, որը «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքի համաձայն իրականացնում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործառույթներ:

Բաժինը ստեղծվում, վերակազմակերպվում և նրա գործունեությունը դադարեցվում է օրենքով սահմանված կարգով՝ համայնքի ավագանու (Երևան քաղաքում Երևանի ավագանու) որոշմամբ: Բաժինը գործում է իր կանոնադրության համաձայն, որի հաստատումն ապահովում է համայնքի ղեկավարը (Երևան քաղաքում Երևանի ավագանին՝ Երևանի քաղաքապետի ներկայացմամբ):

Բաժինն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և բաժնի հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր և անհատականացման այլ միջոցներ:

➤ **ՔԿԱԳ տարածքային բաժնի պետը**

Բաժնի անմիջական ղեկավարումն իրականացնում է բաժնի պետը:

Քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման ճշտության և քաղաքացիական կացության ակտերի գրառումները կազմելու որակի համար պատասխանատու են բաժնի պետը և գրանցում կատարող աշխատողը:

*Բաժնի պետը՝*

1. կազմակերպում է բաժնի աշխատանքները, իր իրավասության շրջանակներում տալիս է հանձնարարականներ բաժնի աշխատակիցներին և վերահսկում է դրանց ժամանակին և պատշաճ կատարումը.
2. կազմակերպում է քաղաքացիական կացության ակտերի գրանցումների հետ կապված իրավական ակտերի կատարումը.
3. կատարում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումները.
4. բաժնի աշխատողների միջև բաշխում է նրանց պարտականությունները.
5. կատարում է օրենքով և իրավական այլ ակտերով իր վրա դրված այլ լիազորություններ:

*Բաժնի աշխատողը՝*

1. բաժնի պետի հանձնարարությամբ կատարում է քաղաքացիական կացության ակտերի գրանցումներ, վկայականների, տեղեկանքների, ակտային պատճենների և այլ փաստաթղթերի տրամադրման գործավարություն.
2. կատարում է օրենքով և իրավական այլ ակտերով իր վրա դրված այլ լիազորություններ:

➤ **Հսկողությունն ու վերահսկողությունը**

ՔԿԱԳ բաժնի գործունեությունը կազմակերպում է համապատասխան համայնքի, Երևան քաղաքում՝ վարչական շրջանի, ղեկավարը, իսկ ակտերի պետական գրանցումների հետ կապված գործունեությունը համակարգում և վերահսկում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը՝ ՀՀ Կառավարության 18 ղեկտեմբերի 2003թ. թիվ 1699 որոշմամբ սահմանված կարգով:

Նշված կարգի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունն օրենքով սահմանված կարգով՝

ա) իրականացնում է բաժինների մեթոդական ղեկավարումը և վերահսկողությունը.

բ) հաստատում է քաղաքացիական կացության ակտերի գրանցումների հետ կապված՝ օրենքից բխող հրահանգչական ցուցումները.

գ) կարող է ներկայացնել առաջարկություններ բաժնի ղեկավարներին և աշխատողներին խրախուսելու կամ կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ.

դ) ուսումնասիրում է բաժինների գործունեությանն ուղղված բողոքները.

ե) կատարում է ստուգումներ բաժիններում գրանցման գործառույթների օրինականության պահպանման վերաբերյալ:

➤ **ՔԿԱԳ տարածքային բաժինների նպատակներն ու խնդիրները**

Բաժնի նպատակները և խնդիրներն են՝

1. քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումների իրականացումը օրենքով սահմանված կարգով և ժամկետներում.
2. քաղաքացիական կացության ակտերի գրառումների ուղղում, փոփոխում, վերականգնում, չեղյալ հայտարարում.
3. քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման մատյանների (ակտային գրքերը) կազմում և պահպանում.
4. տարածքային բաժնի արխիվի վարումը.
5. կատարված քաղաքացիական կացության ակտերի գրանցումների վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկատվության տրամադրումը.
6. օրենքով նախատեսված այլ նպատակներ և խնդիրներ:

➤ **Պետական գրանցման ենթակա ակտերը**

«Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքը սահմանում է պետական գրանցման ենթակա ակտերի սպառիչ ցանկը. դրանք են՝

1. ծնունդը
2. ամուսնությունը
3. ամուսնալուծությունը
4. որդեգրումը
5. հայրությունը որոշելը
6. անվան փոխումը
7. մահը:

Քաղաքացիական կացության ակտի պետական գրանցումը կատարվում է տվյալ ակտի գրանցման համար օրենքով սահմանված փաստաթղթերի ներկայացման հիման վրա:

Քաղաքացիական կացության ակտի պետական գրանցումն իրականացվում է ՔԿԱԳ մարմին փաստաթղթերը ներկայացնելու օրը, եթե օրենքով այլ ժամկետներ նախատեսված չեն:

ՔԿԱԳ տարածքային բաժինների կողմից ակտի գրանցումն իրականացվում է երկու փուլով՝

1. քաղաքացիական կացության ակտում համապատասխան գրառման կատարմամբ
2. գրառման հիման վրա քաղաքացուն պետական գրանցման վկայականի տրամադրմամբ (վկայականը ստորագրում է ՔԿԱԳ մարմնի ղեկավարը և հաստատվում է ՔԿԱԳ մարմնի կնիքով):

*Փուլ առաջին. քաղաքացիական կացության ակտում համապատասխան գրառում կատարելը*

Քաղաքացիական կացության ակտերի գրառումների մատյանները կազմված են քաղաքացիական կացության ակտերի գրառումների ձևաթղթերի 2 օրինակից, որոնք լրացվում են միաժամանակ և համարակալվում միևնույն հերթական համարով:

***Փուլ երկրորդ. կատարված գրառման հիման վրա քաղաքացուն պետական գրանցման վկայական տրամադրելը***

ՔԿԱԳ տարածքային բաժինները այս կամ այն քաղաքացիական կացության ակտը գրանցելու համար անհրաժեշտ վկայականները ստանում են ՀՀ Արդարադատության նախարարության ՔԿԱԳ գործակալությունից: Վկայականների ընդունումը և բացթողումն իրականացվում է Նախարարության ՔԿԱԳ գործակալությունում՝ ՔԿԱԳ գործակալության պետի հսկողությամբ կամ նրա հանձնարարությամբ՝ գործակալության պետի տեղակալի հսկողությամբ:

ՔԿԱԳ գործակալությունից վկայականները տրամադրվում են ՔԿԱԳ մարմնի ղեկավարին կամ նրա կողմից լիազորված անձին:

ՔԿԱԳ վկայականը լրացվում է կապույտ գրիչով կամ թանաքով, պարզ, ընթեռնելի ձեռագրով: Չեն թույլատրվում առանձին բառերի բացթողումներ, կրճատումներ, ինչպես նաև ուղղումներ ու ջնջումներ:

➤ **Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մերժումը**

Օրենքով նախատեսված փաստաթղթերից թեկուզ մեկը չներկայացնելը հիմք է ՔԿԱԳ տարածքային բաժնի կողմից ակտի գրանցումը մերժելու համար:

ՔԿԱԳ տարածքային բաժինը մերժում է ակտի գրանցումը նաև այն դեպքում, երբ այն հակասում է օրենքի պահանջներին:

Անձի (նրա ներկայացուցչի) պահանջով, որին մերժվել է քաղաքացիական կացության ակտի պետական գրանցումը, ՔԿԱԳ մարմնի ղեկավարը պարտավոր է տվյալ անձին (նրա ներկայացուցչին) գրավոր տեղյակ պահել մերժման հիմքերի մասին:

Պետական գրանցումը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

➤ **Գաղտնիության սկզբունքը**

ՔԿԱԳ մարմնի ղեկավարին և աշխատողին քաղաքացիական կացության ակտի պետական գրանցման կապակցությամբ անձի վերաբերյալ հայտնի դարձած տեղեկությունները հրապարակման ենթակա չեն:

➤ **Ծննդյան ակտի պետական գրանցումը**

Ծննդյան ակտի պետական գրանցումն իրականացվում է երեխայի ծննդի կամ ծնողների ծնողներից մեկի բնակության վայրի, գտնված ընկեցիկ երեխաներինը՝ գտնվելու վայրի կամ երեխայի բնակության վայրի, իսկ կյանքի 4 շաբաթվա ընթացքում մահացած երեխայի ծնունդը՝ նաև մահվան վայրի ՔԿԱԳ մարմինը: Ծննդյան ակտի գրառման մեջ, որպես երեխայի ծննդյան վայր, նշվում է երեխայի փաստացի վայրը կամ այն վայրը, որտեղ գտնվել է երեխան:

➤ **Հիմքերը**

1. Ծննդյան մասին սահմանված ձևի փաստաթուղթը՝ տրված բժշկական այն կազմակերպության կողմից, որտեղ տեղի է ունեցել ծնունդը.
2. Ծննդյան մասին սահմանված ձևի փաստաթուղթը՝ տրված բժշկական այն կազմակերպության կողմից, որը ցուցաբերել է բժշկական օգնությունն ծննդի ժամանակ.
3. Ծննդյան մասին սահմանված ձևի փաստաթուղթը՝ տրված Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բժշկական գործունեությամբ զբաղվող անձի (այսուհետ՝ բժիշկ) կողմից՝ բժշկական կազմակերպությունից դուրս ծննդի դեպքում.
4. Ծննդյան մասին սահմանված ձևի գրավոր հայտարարությունը՝ տրված ծննդի ժամանակ ներկա գտնված անձի կողմից՝ բժշկական կազմակերպությունից դուրս եւ առանց բժշկական օգնություն ցուցաբերելու ծննդի դեպքում:

Եթե տվյալ անձը հայտարարություն տալու համար անձամբ չի կարող ներկայանալ ՔԿԱԳ մարմին, ապա տվյալ հայտարարության տակ դրված նրա ստորագրությունը պետք է վավերացվի նոտարական կարգով:

Ծննդի պետական գրանցման հիմքերի բացակայության դեպքում երեխայի ծննդի պետական գրանցումը կատարվում է երեխայի ծննդաբերության փաստը հաստատող դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա:

➤ **Ժամկետը**

Ծննդյան ակտի գրանցման համար գրավոր հայտարարությունը պետք է ներկայացվի երեխայի ծննդյան պահից մեկ տարվա ընթացքում: Այսպես, մեկ տարեկան դարձած երեխայի ծննդի պետական գրանցումը բժշկական կազմակերպության կամ բժշկի կողմից ծննդյան մասին տրված սահմանված ձևի փաստաթղթի առկայության դեպքում իրականացվում է ծնողների (ծնողների մեկի) կամ երեխայի գտնվելու վայրի համայնքի ղեկավարի (Երևան քաղաքում՝ վարչական շրջանի ղեկավարի) կամ լիազորված անձի կամ շահագրգիռ այլ անձանց գրավոր դիմումի հիման վրա: Երեխայի չափահաս դառնալուց հետո նրա ծննդի պետական գրանցումն իրականացվում է իր դիմումի հիման վրա:

➤ **Ամուսնության պետական գրանցման հիմքերը և կարգը**

*Հիմքերը.*

Ամուսնության պետական գրանցման համար հիմք է համարվում ամուսնացող անձանց համատեղ դիմումը:

Դիմումին կից ներկայացվում են՝

1. ամուսնացողների անձը հաստատող փաստաթղթերը.
2. եթե անձը նախկինում գտնվել է ամուսնության մեջ, նաև նախորդ ամուսնության դադարման մասին փաստաթուղթը:

*Կարգը.*

Ամուսնության պետական գրանցումն իրականացվում է ՔԿԱԳ մարմին ամուսնացող անձանց ներկայացրած համատեղ դիմումում նշված օրը, սակայն ոչ շուտ, քան դիմումը ներկայացնելու օրվան հաջորդող 10-րդ օրը և ուշ, քան երեք ամիսը:

Ամուսնացող անձանց համատեղ դիմումի հիման վրա ամուսնության պետական գրանցման 10-օրյա ժամկետը կարող է կրճատվել հարգելի պատճառների առկայության:

*Նշված պատճառներն են՝*

- 1) ամուսնացող անձանց համատեղ երեխա (ներ) ունենալը.
- 2) ամուսնացող կնոջ հղիությունը (առնվազն 12 շաբաթական).
- 3) ամուսնացող անձի գորակոչվելը ժամկետային զինվորական ծառայության.
- 4) ամուսնացող անձի՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերում ծառայության կամ ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվելը.
- 5) Հայաստանի Հանրապետությունում ամուսնացող օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց, օտարերկրյա պետությունում մշտապես բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ միմյանց կամ օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հետ ամուսնության դեպքում ամուսնացողների կամ նրանցից մեկի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից երկարատև ժամանակով մեկնելու (բացակայելու) դեպքում.
- 6) ամուսնացող անձի ծանր հիվանդությունը:

*Վերը նշված հարգելի պատճառները պետք է հաստատված լինեն համապատասխան փաստաթղթերով:*

### ➤ **Պատասխանատվություն**

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 169՝ հոդվածի՝ Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններին սուտ տեղեկություններ հաղորդելը՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը՝ երկու տարի ժամկետով:

### ➤ **Ամուսնալուծության պետական գրանցումը**

*Հիմքերը.*

1. ամուսինների համատեղ դիմումը՝ ՔԿԱԳ մարմիններում ամուսինների միջև փոխադարձ համաձայնության առկայությամբ ամուսնալուծություն կատարելու համար.
2. ամուսիններից մեկի դիմումը, եթե մյուսը դատարանի կողմից ճանաչվել է անհայտ բացակայող կամ անգործունակ կամ դատապարտվել է ազատազրկման երեք տարուց ոչ պակաս ժամկետով.

3. դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը՝ դատական կարգով ամուսնալուծություն կատարելու դեպքերում:

*Շամկետը.*

Ամուսնալուծության պետական գրանցումն իրականացվում է ամուսնալուծության մասին դիմում տալու օրվանից մեկ ամիս անցնելուց հետո, բայց երեք ամսից ոչ ուշ, երկու ամուսինների ներկայությամբ կամ ամուսիններից մեկի պարտադիր ներկայությամբ և մյուսի՝ սահմանված կարգով վավերացված համաձայնությամբ:

➤ **Որդեգրման պետական գրանցումը**

*Հիմքը.*

1. որդեգրողի, նրա ներկայացուցչի դիմումը.
2. դատարանի՝ որդեգրման մասին օրինական ուժի մեջ մտած վճիռը:

**Գաղտնիությունը՝**

ՔԿԱԳ մարմնի ղեկավարը և աշխատողը, առանց որդեգրողների (որդեգրողի) համաձայնության, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի («Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենք, հոդված 11, հոդված 47, 2-րդ մաս) իրավասու չեն որդեգրման մասին որևէ տեղեկություն հայտնելու կամ փաստաթղթեր տալու:

➤ **Հայրության գրանցման պետական գրանցումը**

*Հիմքերը.*

1. երեխայի ծննդյան պահին ամուսնության մեջ չգտնվող հոր և մոր համատեղ դիմումը
2. նախատեսված դեպքերում՝ երեխայի մոր հետ ամուսնության մեջ չգտնվող երեխայի հոր դիմումը /«Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մաս/
3. հայրության կամ հայրության ճանաչման փաստի որոշման մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը:

Երեխայի ծննդյան պետական գրանցման պահին երեխայի մոր հետ ամուսնության մեջ չգտնվող հոր դիմումի համաձայն՝ հայրության որոշման պետական գրանցումն իրականացվում է մոր մահվան, նրան անգործունակ ճանաչելու, մոր գտնվելու վայրը պարզելու անհնարինության, մորն անհայտ բացակայող ճանաչելու կամ նրան ծնողական իրավունքներից զրկելու մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռի, ինչպես նաև հայրության որոշման մասին խնամակալության և հոգաբարձության մարմնի համաձայնության առկայության դեպքում:

Նման դեպքերում պետք է ներկայացվել վերը նշված հանգամանքները հաստատող ապացույցներ՝ մոր մահվան վկայականը, մորն անգործունակ ճանաչելու, ծնողական իրավունքներից զրկելու, անհայտ բացակայող ճանաչելու մասին



դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռի պատճենն և կամ համապատասխան մարմնից մոր վերջին հայտնի բնակության վայրի մասին փաստաթուղթը, որը հաստատում է մոր գտնվելու վայրը պարզելու անհնարինությունը:

### ➤ Անվան փոխման պետական գրանցումը

Տասնվեց տարին լրացած անձն իրավունք ունի սահմանված կարգով փոխելու իր անունը, որը ներառում է անունը, հայրանունը եւ ազգանունը:

Անվան փոխման պետական գրանցումը կատարվում է անունը փոխել ցանկացող անձի մշտական բնակության կամ ծննդի պետական գրանցման վայրի ՔԿԱԳ մարմնում՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համաձայնությամբ:

#### *Ժամկետը.*

Անվան փոխման մասին դիմումը ՔԿԱԳ մարմինը քննության է առնում դիմում տալու օրվանից երկամսյա ժամկետում:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հարգելի պատճառների առկայության դեպքում դիմումի քննարկման ժամկետը ՔԿԱԳ մարմնի ղեկավարը կարող է երկարաձգել առավելագույնը մեկ ամսով, իսկ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը՝ առավելագույնը երկու ամսով:

### ➤ Մահվան պետական գրանցումը

#### *Հիմքերը.*

1. բժշկական կազմակերպության կամ բժշկի տված՝ մահը հաստատող սահմանված ձևի փաստաթուղթը.
2. անձի մահվան փաստի հաստատման կամ անձին մահացած ճանաչելու մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը:

Մահվան պետական գրանցումն իրականացնում է մահացածի վերջին բնակության վայրի, մահը վրա հասնելու վայրի, մահացածի դիակի հայտնաբերելու կամ մահվան մասին փաստաթուղթ տված կազմակերպության գտնվելու վայրի ՔԿԱԳ տարածքային մարմինը (այսուհետ՝ ՔԿԱԳ մարմին):

Երևան քաղաքում մահվան գրանցումը կատարվում է ՀՀ արդարադատության նախարարության ՔԿԱԳ գործակալության Երևանի հատուկ սպասարկում տարածքային բաժնում:

Մահվան պետական գրանցման սահմանված ժամկետը բաց թողնելը չի կարող հիմք հանդիսանալ մահվան գրանցումը մերժելու համար:

Եթե մահվան գրանցման մասին հայտարարություն տրվել է սահմանված ժամկետի բացթողումով, սակայն մինչև մեկ տարին լրանալը, ապա մահը գրանցվում է ընդհանուր կարգով՝ մահվան ընթացիկ գրանցման մատյանում:

Այն դեպքում, երբ մահվան պետական գրանցման մասին հայտարարություն ստացվել է մահվանից մեկ տարի անց, ապա մահվան գրանցումը կատարվում է մահվան ընթացիկ գրանցումների մատյանում՝ ընդհանուր կարգով՝ որպես սկզբնական գրանցում, սակայն հերթական համարից հետո լրացնելով՝ «Գրանցում՝ Ժամկետի բացթողմամբ» բառերը:

Դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա մահացած ճանաչված անձանց մահը գրանցելիս, մահվան գրանցման մեջ որպես մահվան ժամանակ ցույց է տրվում դատարանի վճռի օրինական ուժի մեջ մտնելու ժամանակը, եթե մահվան ժամանակը դատարանի վճռով չի որոշված:

Մահվան գրանցման համար, ներառյալ վկայական տալը, պետական տուրք օրենքով սահմանված չէ:

➤ **Քաղաքացիական կացության ակտերի գրառումներում ուղղումներ կամ փոփոխություններ կատարելը**

*Հիմքերը.*

Քաղաքացիական կացության ակտերի գրառումներում ՔԿԱԳ մարմնի կողմից ուղղումներ, լրացումներ կամ փոփոխություններ կատարելու հիմք են.

ա) որդեգրման ակտի գրառումը.

բ) հայրության որոշման ակտի գրառումը.

գ) անվան փոխման ակտի գրառումը.

դ) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը.

ե) երեխայի անվան փոխման մասին խնամակալության և հոգաբարձության մարմնի որոշումը.

զ) երեխայի ծննդի ակտի գրառման մեջ նրա հոր մասին տեղեկություններ լրացնելու, փոփոխելու կամ հանելու մասին հոր հետ ամուսնության մեջ չգտնվող մոր դիմումը.

է) տվյալ անձի ծննդի ակտի գրառման մեջ ծնողների վերաբերյալ տեղեկությունները փոխելու մասին չափահաս անձի դիմումը՝ ծնողների (ծնողներից մեկի) կողմից իրենց անվան փոխման դեպքում.

է1) երեխայի ծննդյան ակտի գրանցման մեջ նրա, հոր կամ մոր մասին տեղեկությունների (անունը, հայրանունը, ազգանունը փոխելու կապակցությամբ) ուղղման վերաբերյալ ծնողների (ծնողի) դիմումը.

է2) ծննդի ակտի գրանցման մեջ տվյալ անձի կամ իր ծնողների ազգության լրացման վերաբերյալ տվյալ անձի դիմումը, իսկ երեխաների դեպքում՝ ծնողներից մեկի դիմումը.

է3) տվյալ անձի քաղաքացիական կացության ակտային գրանցումներում առանձին տառերի ուղղման, փոփոխման կամ լրացման վերաբերյալ դիմումը, բացառությամբ մահվան կամ որդեգրման.

ը) մահացածի անձը ճանաչելու մասին նախաքննության կամ հետաքննության մարմնի կողմից սահմանված ձևով տրված փաստաթուղթը, եթե մահը գրանցված է որպես անհայտ անձի մահ.

թ) քաղաքացիական կացության ակտի գրառման մեջ ուղղում, լրացում կամ փոփոխություն կատարելու մասին ՔԿԱԳ մարմնի եզրակացությունը՝ օրենքի 70-րդ հոդվածով նախատեսված դեպքերում:

### *Ժամկետը.*

Քաղաքացիական կացության ակտի գրառման մեջ ուղղում, լրացում կամ փոփոխություն կատարելու մասին դիմումը ՔԿԱԳ մարմինը պետք է քննարկի դրա ստացման օրվանից հետո՝ մեկամսյա ժամկետում:

Քաղաքացիական կացության ակտի ուղղված, լրացված կամ փոփոխված գրառման հիման վրա տալիս է քաղաքացիական կացության ակտի պետական գրանցման նոր վկայական:

### ➤ **ՔԿԱԳ գրառումները վերականգնելը և չեղյալ հայտարարելը**

*Կարգը. (Հայաստանի Հանրապետության կառավարության 23.06.2005թ. թիվ 995-Ն որոշում)*

Ակտի գրառումը վերականգնելու մասին դիմումը ներկայացվում է դիմողի բնակության վայրի ՔԿԱԳ տարածքային բաժին:

#### *Դիմումին կցվում են՝*

ա) դիմողի անձը հաստատող փաստաթղթի պատճենը.

բ) կորած ակտի գրանցման գտնվելու վայրի ՔԿԱԳ-ի համապատասխան մարմնի կողմից տրված տեղեկանքն ակտերի գրանցման գրքերում գրանցում չլինելու մասին.

գ) դիմողի ինքնակենսագրությունը (հոր, մոր, եղբայրների, քույրերի, երեխաների մասին տվյալների մանրամասն նշումով).

դ) դիմողի բնակության վայրի մասին տեղեկանք՝ նշելով նրա հետ համատեղ ապրող ընտանիքի անդամներին (հորը, մորը, եղբայրներին, քույրերին, երեխաներին) և նրանց մասին տեղեկություններ (ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան ամիսը, ամսաթիվը և տարեթիվը, ծննդավայրը).

ե) ակտի գրառումը վերականգնելու համար անհրաժեշտ տեղեկությունները հաստատող փաստաթղթեր (զինվորական գրքույկի, աշխատանքային գրքույկի, կրթությանը վերաբերող փաստաթղթերի, ամուսնության, ամուսնալուծության, երեխաների, եղբայրների, քույրերի ծննդյան վկայականների պատճենները, ինչպես նաև տեղեկանք՝ տրված աշխատանքի վայրից և այլն).

զ) լուսանկար՝ 2 հատ, 3 x 4 չափսի:

Քաղաքացիական կացության ակտերի գրառումների վերականգնումն իրականացվում է քաղաքացիական կացության ակտի կորած գրառումը կազմած ՔԿԱԳ մարմինը՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա, եթե սահմանված կարգով անհնար է իրականացնել քաղաքացիական կացության ակտերի գրառումների վերականգնումը:

Քաղաքացիական կացության ակտի առաջնակի կամ վերականգնված գրառման բացակայության մասին քաղաքացիական կացության ակտի պետական գրանցման փաստի վերականգնման նպատակով դատարան դիմելու համար հիմք է համարվում ՔԿԱԳ մարմնի մերժումը:

Ակտի վերականգնված գրառման հիման վրա տրվող վկայականների վրա դրվում է դրոշմակ՝ «*Գրանցումը վերականգնված է*» մակագրությամբ: Տրված վկայականի սերիան և համարը նշվում են վերականգնված ակտի գրանցման 2 օրինակի վրա:

### *Ժամկետը.*

Ակտերի գրառումները վերականգնելու վերաբերյալ հարցերի քննարկումը պետք է ավարտվի ոչ ուշ, քան երկամսյա ժամկետում՝ հաշված ՔԿԱԳ-ի տարածքային մարմնում դիմումն ստանալու օրվան հաջորդող օրվանից:

Ըստ անհրաժեշտության՝ այդ ժամկետը կարող է երկարաձգվել ոչ ավելի, քան 2 ամիս՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության ՔԿԱԳ-ի գործակալության պետի կողմից համապատասխան մակագրություն կատարվելու միջոցով:

### **➤ Քաղաքացիական կացության ակտերի գրանցումների վերաբերյալ վկայականի կրկնօրինակներ տրամադրելը**

Քաղաքացիական կացության ակտի գրառման հիման վրա, քաղաքացու դիմումի համաձայն, տրվում է քաղաքացիական կացության ակտի պետական գրանցման վկայականի կրկնօրինակ:

*Քաղաքացիական կացության ակտի պետական գրանցման վկայականի կրկնօրինակը տրվում է՝*

ա) այն անձին, որի վերաբերյալ կատարվել է տվյալ քաղաքացիական կացության ակտի գրառումը.

բ) մահացածի ազգականին կամ շահագրգիռ անձին՝ մահվան ակտի գրառման վերաբերյալ.

գ) ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) կամ խնամակալության և հոգաբարձության մարմնի ներկայացուցչին, եթե անձը, որի վերաբերյալ կատարվել է քաղաքացիական կացության ակտի գրառումը, վկայականի կրկնօրինակի տրման օրը անգործունակ է.

դ) այլ անձի, եթե նա քաղաքացիական կացության ակտի պետական գրանցման վկայականի կրկնօրինակ ստանալու իրավունք ունեցող անձի կողմից ներկայացնում է սահմանված կարգով տրված լիազորագիր:

*Կրկնօրինակ չի տրվում՝*

ա) երեխայի ծննդյան վկայականի՝ այն ծնողներին, որոնք այդ երեխայի նկատմամբ զրկված են ծնողական իրավունքներից կամ սահմանափակված են նրանց ծնողական իրավունքները.

բ) ամուսնության վկայականի՝ այն անձանց, որոնց ամուսնությունը դադարել է կամ անվավեր է ճանաչվել:

Վերոհիշյալ անձանց դիմումով նրանց տրվում է երեխայի ծնունդը կամ ամուսնության պետական գրանցումը հաստատող փաստաթուղթ:

Վկայականների կրկնօրինակներ չեն տրամադրվում դադարած ամուսնության և մահացածի վերաբերյալ (բացի մահվան գրանցումից), ինչպես նաև անվավեր ճանաչված քաղաքացիական կացության ակտային գրանցումներից: Շահագրգիռ անձանց դիմումով ՔԿԱԳ մարմինը տրամադրում է փաստաթուղթ, որով հաստատվում են քաղաքացիական կացության ակտերի գրանցումները:

#### *Ժամկետը.*

ՔԿԱԳ մարմինը քաղաքացիական կացության ակտի պետական գրանցման վկայականի կրկնօրինակ է տալիս դիմելուց հետո՝ մեկ օրվա ընթացքում, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

#### ➤ **Քաղաքացիական կացության ակտի գրանցման առկայության կամ բացակայության վերաբերյալ տեղեկանքներ տրամադրելը**

##### *Տեղեկանք տրամադրվում է՝*

ա) անձին, որը դիմել է ՔԿԱԳ մարմին իր վերաբերյալ տեղեկություն ստանալու համար.

բ) ծնողներին (օրինական ներկայացուցիչներին), խնամակալության և հոգաբարձության մարմիններին.

գ) այլ անձի, եթե նա ներկայացնում է ՔԿԱԳ վերաբերյալ տեղեկանք ստանալու իրավունք ունեցող անձի կողմից սահմանված կարգով տրված լիազորագիր.

դ) երեխաներին՝ իրենց մահացած ծնողների վերաբերյալ:

16-18 տարեկան երեխաները ՔԿԱԳ վերաբերյալ տեղեկանք կարող են ստանալ իրենց դիմումի հիման վրա, եթե ունեն անձը հաստատող փաստաթուղթ:

#### *Ժամկետը.*

ՔԿԱԳ տարածքային մարմինների կողմից վկայականի կրկնօրինակներ և ՔԿԱԳ վերաբերյալ տեղեկանքներ տրամադրվում են ՔԿԱԳ մարմին դիմելուց հետո մեկ օրվա ընթացքում:

Ամուսնության և ամուսնալուծության ակտային գրանցման առկայության կամ բացակայության վերաբերյալ տեղեկանքները տրամադրվում են ՔԿԱԳ մարմին դիմելուց հետո եռօրյա ժամկետում:

#### ➤ **Գանձվող պետական տուրքը**

Համաձայն «Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի՝ քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումների և դրանց հետ կապված այլ գործառույթների համար գանձվում է պետական տուրք՝ օրենքով սահմանված կարգով և չափով:

Պետական տուրքի չափերը սահմանված են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով: Որպես բազային տուրքի չափ՝ ընդունվում է 1000 ՀՀ դրամը:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի աշխատավայրից (բաժնից) դուրս կատարվող քաղաքացիական կացության ակտերի գրանցման համար պետական տուրքը գանձվում է տվյալ ակտային գրանցման համար սահմանված պետական տուրքի դրույքաչափի տասնապատիկի չափով:

## Եզրակացություն և առաջարկություններ

Այսպիսով, 2012 թվականի հուլիսի 17-ից մինչև հոկտեմբերի 12-ը ընկած ժամանակահատվածում ՀԵԻԱ կողմից իրականացված հասարակական մոնիթորինգի ընթացքում պարզ դարձավ, որ 2011թ. ՔԿԱԳ բաժինների կողմից ծառայությունների մատուցման մոնիթորինգի արդյունքում բացահայտված հիմնախնդիրները դեռևս ամբողջովին լուծված չեն: Չնայած որոշ ուղղություններով առաջընթացին, որոշ ցուցանիշների առումով նույնիսկ նկատվում է հետընթաց, որը հատկապես վերաբերվում է Երևանի տարածքային բաժիններին: Ուստի անհրաժեշտ են ինչպես օրենսդրական, այնպես էլ վարչական բնույթի փոփոխություններ՝ միտված ՔԿԱԳ աշխատակիցների շրջանում կարգապահության մակարդակի բարձրացմանը, նրանց կողմից էթիկայի կանոնների պահպանմանը, կոռուպցիոն ռիսկերի կանխարգելմանը: Հրատապ խնդիր կարելի է դիտարկել նաև որոշ ՔԿԱԳ բաժնի ղեկավարների և աշխատողների նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոցներ կիրառելու հարցը:

Հրատապ խնդիր է որոշ ՔԿԱԳ բաժնի ղեկավարների և աշխատողների նկատմամբ կարգապահական պատասխանատվության միջոցներ կիրառելու հարցը:

Սակայն այդ փոփոխություններին զուգահեռ անհրաժեշտ է բարձրացնել մեր քաղաքացիների իրավագիտակցության մակարդակը: Հատկապես ցածր է քաղաքացիների իրազեկության մակարդակը՝ ինչպես պահանջվող փաստաթղթերի, գործող պետական տուրքի դրույքաչափերի, այնպես էլ քաղաքացիական կացության ակտերի գրանցման ընթացակարգերի վերաբերյալ: Այդ հանգամանքը պատճառ է դառնում ՔԿԱԳ մարմինների աշխատակիցների կողմից զանազան չարաշահումների համար: ՔԿԱԳ ոլորտը պետք է լինի արդիական տեխնոլոգիաներով զինված, թափանցիկ և հերթագրման ժամանակակից համակարգով գործառնող: Անհրաժեշտ է բարձրացնել ոլորտի աշխատակիցների աշխատավարձը, բարվոք վիճակի բերել ՔԿԱԳ մարմինների շենքային պայմանները, գույքային և տեխնիկական զինվածությունը: Եվ միայն համալիր այս փոփոխությունների դեպքում հնարավոր կլինի ապահովել մատուցվող ծառայությունների պատշաճ որակը:

Առանձնացնելով այս ոլորտում նախատեսված բարեփոխումները, պետք է նշել, որ որպես խախտումների կանխարգելման միջոց՝ կարևորվում է նաև շարունակական մոնիթորինգների մեխանիզմը, և դրա վկայությունն է այն զգաստությունը, որը դրսևորում են մոնիթորինգի իրականացման ժամանակ ՔԿԱԳ տարածքային բաժինների աշխատակիցները, և այն ոգևորությունը, որը նկատելի է ՔԿԱԳ բաժինների ծառայություններից օգտվող քաղաքացիների շրջանում:

## Ամփոփ առաջարկներ

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքները, առաջարկում ենք ոլորտում՝

1. օրենսդրական մակարդակով հստակեցվեն ՔԿԱԳ տարածքային բաժինների գործունեության նկատմամբ հսկողություն և վերահսկողություն իրականացնող պետական մարմինների գործառույթները՝ դրանց արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Մասնավորապես, «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքի 78-րդ հոդվածում կատարել լրացում՝ ստեղծելով առանձնացված բաժին, որն անմիջականորեն հսկողություն կիրականցնի համայնքային ենթակայության ստորաբաժանումների, այդ թվում՝ ՔԿԱԳ տարածքային բաժինների նկատմամբ՝ պարբերաբար այցելություններ և այլ միջոցառումներ իրականացնելու միջոցով:

2. Կիրառվեն վարչական տույժեր՝ հսկողություն իրականացվող մարմնի կողմից թերություններ և խախտումներ հայտնաբերելու դեպքերում:

Մասնավորապես, «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենսգրքում ավելացնել հոդված, որը կսահմանի վարչական տուգանք՝ ՔԿԱԳ տարածքային բաժնի ղեկավարի կամ աշխատողի կողմից՝ «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքով և այլ ենթաօրենսդրական ակտերով նախատեսված նորմերը խախտելու համար:

3. Ներդրվի ՔԿԱԳ տարածքային բաժնի կողմից տրված մերժման պատասխանը արտադատական կարգով բողոքարկելու հնարավորություն:

Մասնավորապես, «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածում կատարել լրացում՝ սահմանելով, որ ՔԿԱԳ տարածքային բաժնի կողմից տրված մերժման պատասխանը կարող է բողոքարկվել ինչպես դատական, այնպես էլ արտադատական կարգով՝ համայնքներում, իսկ Երևան քաղաքում՝ վարչական շրջաններում առանձնացված և անմիջական հսկողություն իրականացնող բաժին դիմելու միջոցով:

4. Իրականացվեն համապատասխան վարչաիրավական բարեփոխումներ,

Մասնավորապես, «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքում ավելացնել հոդված, որը կսահմանի՝ ՔԿԱԳ տարածքային բաժինները գործում են «մեկ պատուհանի» սկզբունքով:

Նշված կարգը կբացառի օրենքով չնախատեսված հավելյալ գումարների գանձման հնարավորությունը:

5. Հաշվի առնելով երեխայի ծննդյան ակտի գրանցման անհրաժեշտությունն ու կարևորությունը, ծննդյան ակտի չգրանցման հետևանքները (երեխաների՝ թրաֆիքինգի զոհ դառնալու, նրանց այլ կերպ շահագործման հնարավորության մեծացումը), առաջարկում ենք «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին կետի՝ «Երեխայի ծննդյան մասին գրավոր հայտարարությունը ՔԿԱԳ մարմնին տրվում է ոչ ուշ, քան երեխայի ծննդի օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում» նորմը փոփոխել՝ սահմանելով ծննդի գրանցման ավելի կարճ ժամկետ՝ մինչև բժշկական կազմակերպությունից երեխայի դուրս գրումը:



6. Նկատի ունենալով, որ օրենքը ըստ հիմքերի (ամուսինների համատեղ դիմում, դատարանի վճիռ) չի տարբերակում ամուսնալուծության պետական գրանցման կատարման ժամկետը՝ կամայականություններից և կոռուպցիոն ռիսկերից խուսափելու համար նպատակահարմար է օրենքում կատարել տարբերակում:

Մասնավորապես, «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ կետում կատարել լրացում՝ սահմանելով, որ դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա ամուսնալուծությունը կատարվում է դիմումը և վճիռը ՔԿԱԳ համապատասխան տարածքային բաժին ներկայացնելու օրվանից՝ եռօրյա ժամկետում:

7. Տարբեր ՔԿԱԳ տարածքային բաժինների միջև ստեղծվի էլեկտրոնային ցանց, որը հնարավորություն կտա մի քանի ընթացքում պարզել՝ համապատասխան տեղեկանքի կամ գրանցման առկայությունը և բացակայությունը:
8. ՁԼՄ-ների ներգրավմամբ իրականացվեն քաղաքացիների իրազեկման բնույթի լայնածավալ միջոցառումներ:
9. Հասարակական կազմակերպություններին հնարավորություն տրվի իրականացնել մշտադիտարկում:
10. Կրթական հաստատությունների ներգրավմամբ իրականացվեն ՔԿԱԳ մարմինների աշխատակիցների մասնագիտական ուսուցման և վարքագծի կանոնների վերաբերյալ ծրագրեր:
11. Բարեկարգվեն ՔԿԱԳ տարածքային բաժինների շենքային պայմանները՝ քաղաքացիների պատշաճ սպասարկումն իրականացնելու համար: